

Ս. ԾՆՈՒՆԴ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

«Ես ցույց եմ տալու նրան, բայց ոչ Հիմա, երանելի եմ դարձնելու նրան, բայց ոչ մոտ ժամանակներում:

Ծագելու է Հակոբի ասույդը, մի մարդ է բարձրանալու իսրայելացիներից...»:

(ԹՎՈՅ ԻԴ 17)

Հավատալով և անսալով այս մարգարեությանը, մոտ երկու հազար տարի առաջ արևելքից եկած մոզերը, երկնակամարում երևացող աստղի առաջնորդությամբ, հասան նորածնունդ Փրկչին ու երկրպագեցին: Այսպես արդեն քանի սերունդ, համայն քրիստոնյա աշխարհը գնում է մոզերի անցած ուղով՝ երկրպագելու Նորամանկանը, իր հոգու սերն ու անաղարտությունը, որպես խնկարույր նվեր, շռայլորեն դնելու Ամենակարող Տիրոջ ոտքերի առջև, մեկ անգամ ևս խորհելու սեփական կյանքի անցած և անցնելիք ուղու մասին, վերակենսավորվելու Հիսուսի Ս. Ծննդյան մեծ ավետիստով կամ, ինչպես հնում ընդունված էր ասել, Աստվածահայտնությամբ:

Այս հունվարի 6-ին ևս, ի լուր ողջ հայության՝ ի Հայաստան, Արցախ և ի սփյուռս աշխարհի, Հայոց եկեղեցիների անլուելի զանգակներն ավետեցին Բեթղեհեմյան այն լուր ու խաղաղ գիշերվա սքանչելի ու մեծ խորհուրդը, համաձայն որի անմեկնելի խոնարհության մեջ ծնվեց երկնի ու երկրի Տերը, արքաների Արքան՝ վերախմաստավորելու մարդկային արժեզրկված կյանքը, վերակերտելու մարդուն շնորհված Աստվածային պատկերը, որ աղավաղվել էր մեր նախահոր մեղքով: Իսկ մինչ այդ...

5-ը հունվարի 1997 թվական: Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում մատուցվում է Շրագայույցի Սուրբ և անմահ Պատարագ: Ս. Պատարագ էր մատուցվում նաև Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, որն սկսվեց հավարտ երեկոյան ժամերգության: Նախ, ըստ ընդունված կարգի, ընթերցվեցին Սուրբ Գրային հատվածներ՝ Դանիել մարգարեի ընթերցվածը, որից անմիջապես հետո սկսվեց Ս. Պատարագի արարողությունը:

Օրվա պատարագիչն ու քարոզիտսն էր հոգեշնորհ Տ. Հայկազուն ծայրագույն վարդապետ Նաջարյանը: Հավուր պատշաճի ներկայացնելով օրվա հանդիսավորությունը՝ պատարագիչ Հայր Սուրբը ներկա

հավատացյալներին մեկ անգամ ևս հիշեցրեց Մրազայույցի խորհուրդը և առավել հանգամանակից արժևորեց կատարվելիք նախատոնակը:


Հաջորդ օրը՝ հունվարի 6-ին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Ս. Մանդյան և Աստվածահայտնության Պատարագ էր մատուցում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Ս. Պատարագին ներկա էին Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը՝ տիկնոջ հետ, Ազգային Ժողովի նախագահ Բարկեն Արարքյանը՝ տիկնոջ հետ, Սահմանադրական Պատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, ՀՀ Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարար Արմեն Սմբատյանը, Գիտության և կրթության նախարար Արտաշես Պետրոսյանը, Սոցիալական ապահովության նախարար Հրամուշ Հակոբյանը, Կրոնից գործոց խորհրդի նախագահ Լազար Սուրյանը, Երևանի քաղաքապետ Վանո Սիրադեղյանը, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի տնօրեն Մանուշակ Պետրոսյանը, Հայաստանում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Անդրեյ Ռոնոփը, Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Միշել Լեգրանը, Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Կարոլա Մյուլլեր Հոլթբեմփերը, Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Համիդ Ռեզա Նիքբար Էսֆահանին, Ուկրաինայի արտակարգ և լիազոր դեսպան Ալեքսանդր Բոժկոն, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Արմավիրի մարզպետ Սեդրակ Հարությունյանը, Էջմիածնի քաղաքապետ Երվանդ Աղվանյանը, Հայաստանում գործող միջազգային, քարեհիրական կազմակերպությունների ներկայացուցիչներ, պաշտոնատար այլ անձինք, հյուրեր արտերկրից, ինչպես նաև բազմաթիվ հավատավոր հայորդիներ: Ամենքը եկել էին մեկ անգամ ևս ոգեկոչելու Աստվածահայտնության և մեր Տիրոջ Ս. Մկրտության բազմադարյա խորհուրդը, աղոթելու, որ Բեթղեհեմի անշուք մի մսուրից ծագած Աստվածային լույսը լուսավորի յուրաքանչյուր հավատավորի միտքն ու հոգին, խնդրելու Երկնահայտ Աստղի անխտոր առաջնորդությունը:

Հրճբացս մատուցվող Պատարագի, իր հայրապետական պատգամը ներկաներին հղեց Նորին Սրբությունը՝ ի մասնավորի շեշտելով, որ Հայոց հինավուրց հողը շատ շուտով ցնծալու է քրիստոնեության պետականացման 1700-ամյակը տոնախմբող միջոցառումների բերկրանքից: Անհրաժեշտ է յուրաքանչյուրի փոքրիկ ներդրումը, որպեսզի տոնակատարությունը խորհրդանշող ցանկացած նախաձեռնություն գործնական ընթացք ունենա: «Այո՛, Աստված մեզ հետ է», - ընդգծեց Ամենայն Հայոց Հայրապետը: Բայց դա առավել գեղեցիկ ու խորախորհուրդ իմաստ կունենա, երբ մենք էլ Աստծու հետ լինենք՝ այս կերպ արժևորելով անցյալը և առավել գնահատելով ներկան, նաև՝ գալիքը: (Վեհափառ Հայրապետի Ս. Մանդյան պատգամը տե՛ս էջ 3):



«ԱՌԱՔԵԼՈՑ ԱՂԱԲԵՆՈՑ...»
ԳԵՂՈՒՄՆ ԱՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՒՆԻ



«ՕՌՀԵՆԱՄԻ ԵՎ ՄՈՐՔԱՄԻ ՏՈՒՐՆԱ...»

ՃԵՌԼ ՎԵՍՏՈՒԹ



Վրիդակ

Սմառգրի գլխավորելով աղագրիսն 1998 թվա-
կանը՝ կարգայ 1997:



«ՕՏԻՂԵՆԱԳԻ ԵՎ ՄԱՌԵՆԻ ՏՈՒՐՆԱ...»



ԲԱՍՏՈՒՅԻՆ ԿՐԻՍՏՈՍ



עיתונאים וכתבים מרחבי העולם בביקורם במוסקבה

Հավարտ Հայրապետական պատգամի, ձեռամբ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Ջրօրհնների մեծախորհուրդ արարողությունը, որ խորհրդանշում է մեր Տիրոջ՝ Հորդանանում մկրտվելը Հովհաննես Մկրտչի ձեռքով: Այս առիթով Ղուկաս Ավետարանիչը մեզ ավանդում է. «Եւ ինքն Յիսուս էր ամաց իբրև երեսնից սկսեալ» /ՂՈՒԿ. Գ 23/: Հենց այս վկայությունը հիմք ունենալով՝ Եկեղեցու Հայրերը հանգեցին այն հետևությանը, որ եթե մեր Տերը՝ Հիսուս, ծնվել է հունվարի 6-ին, ապա ճիշտ երեսուն տարի հետո, նույն օրը, այսինքն՝ հունվարի 6-ին էլ մկրտվել է:

Սուրբ Գրային ընթերցումներից և աղոթասացությունից հետո, հանդիսավորապես, վերաբերումի ձևով Ս. Խորան է բերվում Սրբալույս Մյուռոնով լեցուն Մյուռոնաթափ Աղավնին: «Ով զարմանալի» տաղի երգեցողությունից հետո Նորին Սրբությունը, «Առաքելոյ Աղաւնոյ» շարականի երգակցությամբ, Կենարար Մյուռոնը կաթեցնում է ջրով առլեցուն երեք կաթասների մեջ: Ապա «Պահպանիչ»-ի ժամանակ, հանելով ջրի մեջ գցած խաչը, այն տալիս է օրվա խաչի կնքահորը:

Հընթացս Ջրօրհնների արարողության հնչում է նաև «Այսօր ծայնն հայրական» տաղը, ուր, ինչպես վերոհիշյալում, դարձյալ նկարագրվում է Քրիստոսի մկրտվելը, Ս. Հոգու աղավնակերպ էջըը, Հոր հանելի ծայնը, որ վկայում է, թե՛ «Դա՛ է Իմ սիրելի Որդին»:

Ջրօրհնների արարողությունից հետո, ողջ ներկա հավատավոր ու բարեպաշտ հայորդիները օրհնված ջուրը տուն են տանում այն մեծ ու անմեկնելի հավատով, թե Տիրոջ ներկայության մի մասն իր մեջ պարփակած այս հեղուկը շա՛տ ու շատ ցավեր պիտի դարմանի:

Հավարտ Աստվածահայտնության Պատարագի և Ս. Մկրտության արարողության, վեհարանի ընդունելությունների սրահում տրվեց պաշտոնական ճաշկերույթ:

Այո, ավարտվեց Ս. Ծննդյան Պատարագը: Հավատավոր հայորդին, տունդարձից առաջ, մեկ անգամ ևս մտովի ծնկելով Բեթղեհեմյան աղքատիկ, սակայն Փրկչի ծննդյամբ հարստացած մտուրի առջև, իր փառաբանանքը, իբրև «Խորհուրդ մեծ և սքանչելի», առաքեց առ Բարձրալը՝ իրեն շրջապատողներին փոխանցելով հրեշտակների քաղցրալուր ավետիսը.

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ.

Օրհնեալ է յայտնութիւն Քրիստոսի»....